ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136,
Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

06.10.2016թ.
301-ի 4

“ՀայՓոստ” ՓԲԸ-ի գլխավոր
գործադիր տնօրենի պաշտոնակատար
պարոն Հայկ Ավագյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ավագյան,

2016թ.ի սեպտեմբերի 14-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (ԻԱԿ) պատվիրված նամակով (ցուցակով) գրություններ է ուղարկել դպրոցներին: Այժմ անհրաժեշտ է ճշտել, թե որոշ դպրոցներ երբ են ստացել ԻԱԿ-ի ուղարկած նամակները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե առաքանի N: 4721-4750-ով 1.,5.,6.,7.,8.,14.,16.,17.,24.,25., համարների ներքո հետևյալ դպրոցները ե՞րբ են ստացել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած նամակները և տրամադրել դպրոցների կողմից նամակը ստանալը հավաստող փաստաթղթի (“ՀայՓոստ” ՓԲԸ-ի գրանցամատյանի՝ նամակը ստացողի ստորագրությամբ համապատասխան սյունակի) պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ ծրագրերի համակարգող
Անժելա Նորիկյան